# «ԵՐԵՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

## ՈՒՍԱՆՈՂԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2023

Հաստատված է
« Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և
արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2023թ. սեպտեմբերի 11-ի N6/2023 որոշմամբ:

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է «Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողների առարկայական պարտքերի մարման համակարգը:

1.2.Սույն կարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, «Երևանի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը և իրավական ակտերը:

# 2.ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1. 1-3 «Չներկայացած», «չթույլատրված», «չգնահատված», «չստուգված» և անբավարար միավորներով փակված առարկաները և մոդուլները համարվում են առարկայական պարտքեր:

2.2 Եթե տվյալ առարկայից ուսանողը ունի քննություն և նույն առարկայից կիսամյակային գնահատականը անբավարար է, նրան թույլատրվում է մասնակցել քննության և քննական գնահատականը կհամարվի առարկայի ամփոփիչ գնահատական (առավելագույնը 3 ):

2.3. 1-3 առարկայական պարտքեր ունեցող ուսանողներին թույլատրվում է մասնակցել առարկայական պարտքերի մարման գործընթացին, իսկ 4 և ավելի առարկայական պարտք ունեցող ուսանողները հեռացվում են՝ որպես միջանկյալ ատեստավորում չանցած ուսանողներ:

2.5.Այն ուսանողները, որոնք անցել են առաջին կիսամյակի միջանկյալ ատեստավորումը, շարունակում են իրենց ուսումը 2-րդ կիսամյակում:

2.6. 2-րդ կիսամյակի միջանկյալ ատեստավորումը անցած ուսանողները փոխադրվում են հաջորդ կուրս, իսկ նրանք, ովքեր ունեն առարկայական պարտքեր, մինչև հաջորդ կիսամյակի կամ ուստարվա սկսվելը նրանց համար նշանակվում է մեկ Բաց դռների օր, որի ժամանակ ուսանողին հնարավորություն է տրվում հանձնել առարկայական պարտքերը: Բաց դռների հնարավորությունից հետո տրվում է ևս մեկ հնարավորություն ընդամենը մեկ առարկայի առարկայական պարտք հանձնելու: Այն ուսանողները, որոնք առաջին Բաց դռներից հետո ունեն մեկից ավելի առարկայական պարտք, հեռացվում են, մեկ առարկայական պարտք ունենալու դեպքում համարվում են պայմանական ուսումնառողներ կամ պայմանական փոխադրվածներ: Նրանք առարկայական պարտքերը հանձնում են սեպտեմբերի 1-10-ը ընկած ժամանակահատվածում՝ տնօրենի հրամանով սահմանված Բաց դռների

օրը: Չհանձնելու դեպքում անբավարար առաջադիմություն ցուցաբերե
պատճառով սովորողը հեռացվում է քոլեջից:

2.7.Եթե ուսանողը հարգելի պատճառով (հիվանդություն կամ այլ անհաղթահար
խոչընդոտ) չի ներկայացել կիսամյակային կամ տարեկան ամփոփումնե
(ստուգարք, քննություն), ապա Բաց դռների օրը թույլատրել հանձնել բոլո
անկախ քանակից:

2.9.Առարկայական պարտքերի հանձնման ժամկետները հաստատվում են տնօրե
հրամանով :

## 3. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

3.1. Գործընթացը կազմակերպվում է ուսումնական մասի կողմից:

3.2.Հունիսի 20-26, սեպտեմբերի 1-10-ը և հունվարի 11-18-ը և հունվարի 24
ուսումնական մասի վարիչը պատրաստում է առարկայական պարտքերի ուղեգրեր
տրամադրում առարկայական պարտք ունեցող ուսանողին:

3.3. Ուսանողները իրավունք ունեն հանձնել առարկայական պարտքերը հաստատ
«Բաց դռների» օրերին:

3.4. Առաջին առարկայական պարտքերը չպետք է գերազանցեն երեք առարկան կ
մոդուլը:

3.5. Կիսամյակների ամփոփումների արդյունքում ուսանողի կողմից ունեց
առավելագույն երեք առարկայական պարտքերը թույլատրվում է հանձնել առաջին Բ
դռան օրը: Նույն կիսամյակում ուսանողը կարող է երկրորդ Բաց դռան օրը հանձ
ընդամենը մեկ առարկա: Մեկից ավելի առարկայական պարտք ունենալու դեպք
ուսանողը հեռացվում է քոլեջից: